



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 23_L

21 մարտի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ»
ԵՎ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏԵՍՈՒԹՅԱՆ» ԱՄԲԻՈՆՆԵՐԸ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ՏԵՍՔՈՎ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18)-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18)-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Քաղաքական ինստիտուտների և գործընթացների» և «Քաղաքական գիտության պատմության և տեսության» ամբիոնների վերակազմակերպումը միաձուլման տեսքով՝ Քաղաքագիտության ամբիոնի:

2. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին կառուցվածքային ստորաբաժանումների միաձուլման վերաբերյալ աշխատակիցներին ծանուցումն իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրության և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից՝ բացառությամբ հաստիքների կրճատման դեպքերի, որոնք ուժի մեջ են մտնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտի հաջորդ օրվանից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. մարտ «21»

Երևան